Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 13 հունվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը.

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Վ.Հովհաննիսյանի

քննության առնելով ՀՀ քաղաքացիներ Արամ Սարգսյանի եւ Կարապետ Ռուբինյանի դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Արամ Սարգսյանը եւ Կարապետ Ռուբինյանը ՀՀ սահմանադրական դատարան են դիմել 22.12.2009թ.: Դիմողները ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները ստացել են փոստով համապատասխանաբար 2009թ. հունիսի 22-ին եւ 2009թ. հուլիսի 23-ին:

2. Դիմողները վիճարկում են ՀՀ քրեական օրենսգրքի 225, 225[1] եւ 300 հոդվածների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

3. Առկա է պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդություն:

4. Վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ դիմողները նշում են, որ ՀՀ քրեական վերը նշված հոդվածները անորոշ, ոչ միանշանակ եւ ոչ հստակ ձեւակերպում են ստացել, հետեւաբար՝ ենթարկվում են կամայական եւ չափազանց լայն մեկնաբանության, ինչը հակասում է իրավական որոշակիության սկզբունքներն ամրագրող ՀՀ Սահմանադրության 1, 3, 6 եւ 43 հոդվածներին:

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը: Ուսումնասիրելով դիմումը եւ կից փաստաթղթերը՝ գտնում ենք որ վիճարկվող դրույթները չեն կիրառվել դատարանների կողմից, այլ դրանք կիրառել է նախաքննության մարմինը, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 03.07.2009թ. եւ 27.05.2009թ. համապատասխան որոշումներում պարզապես արձանագրված է, որ նախաքննության մարմինը դիմողներին մեղադրանք է առաջադրել հենց վիճարկվող հոդվածներով: ՀՀ սահմանադրական դատարանի 04.04.2008թ. ՍԴՈ-747 որոշմամբ արտահայտվել է իրավական այն դիրքորոշումը, ըստ որի դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի վկայակոչումը կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ: Դիմողների համար համապատասխան իրավական հետեւանքներ առաջացել են ոչ թե ընդհանուր իրավասության դատարանների դատական ակտերում վիճարկվող դրույթների վկայակոչման արդյունքում, այլ նախաքննության մարմնի կողմից, երբ նրանց մեղադրանք է առաջադրվել վերը նշված հոդվածներով:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 2-րդ կետով եւ 69 հոդվածի 1-ին եւ 6-րդ մասերով՝ ՀՀ սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քրեական օրենսգրքի 225, 225[1] եւ 300 հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ քաղաքացիներ Արամ Սարգսյանի եւ Կարապետ Ռուբինյանի դիմումի քննությունը մերժել:

2. Դատական կազմի սույն որոշումն ընդունվել է ՀՀ սահմանադրական դատարանի անունից:

Նախագահող՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Անդամներ՝ Կ. ԲԱԼԱՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

13 հունվարի 2010 թվական